Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**


Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

# ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
**Արտակ Մաղալյան**

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
**Արամ Սիմոնյան** – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

*ԱՐԱՐԱՏ ԱՂԱՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ*

## ՆԿԱՐԻՉ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՇԻՈՒՄ

Արևելահայ դիմանկարչության և, առհասարակ, նոր կերպարվեստի զարգացման գործում շոշափելի ավանդ ունի Հակոբ Հովնաթանյանի կրտսեր ժամանակակից *Ստեփանոս Ներսիսյանը (1815–1884)*: Նա ծնվել է Երևանում, նախնական կրթություն ստացել էջմիածնում, ապա հաճախել Թիֆլիսի Ներսիսյան դպրոց, որն ավարտելուց հետո՝ 1835-ին, մեկնել Պետերբուրգ՝ Գեղարվեստի ակադեմիայում սովորելու նպատակով: Ակադեմիա ընդունվելու նրա առաջին փորձերն անհաջողության են մատնվել, և Ստ. Ներսիսյանը բավարարվել է նրանով, որ երկու-երեք տարի շարունակ հաճախել է այդ գեղարվեստական բարձրագույն կրթարանին առընթեր երեկոյան դասընթացները:

1838-ին նկարչին վերջապես հաջողվել է ընդունվել Գեղարվեստի ակադեմիա, որտեղ նա հաճախել է պրոֆեսորներ Ա. Վարնեկի և Ա. Զաուերվեյդի ղեկավարած դիմանկարի և ռազմական պատմանկարի դասարանները: Նույն տարիներին ակադեմիայում են սովորել նաև հայ նկարիչներ՝ ծնունդով աստրախանցի, մանկությունը Բաքվում անցկացրած, իսկ հետագայում Մոսկվա տեղափոխված, Բորոդինոյի հերոս, ռուսական բանակի գեներալ-մայոր, բարեգործ Պավել Մելիքովի (Պողոս Մելիքյանց) եղբորորդի Մովսես Մելիքովը և նոր շրջանի հայ նկարչության հիմնադիր Հակոբ Հովնաթանյանի կրտսեր եղբայր, Թիֆլիսում ծնված Աղաթոն Հովնաթանյանը: 1840-ին՝ ուսումն ավարտելուց և «ոչ դասային նկարչի» կոչում ստանալուց հետո, Ստ. Ներսիսյանը որոշ ժամանակ մնացել է Ռուսաստանի մայրաքաղաքում, շարունակել է հաճախել

ակադեմիայի մասնագիտական դասընթացները՝ բնակվելով Թեոդոսիա մեկնած Հովի. Այվազովսկու բնակարանում:

1846-ին Ստ. Ներսիսյանը վերադարձել է Թիֆլիս և շուտով, որպես նկարչության և վայելչագրության ուսուցիչ, աշխատանքի անցել Ներսիսյան դպրոցում:

Այսօր հայտնի են Ստ. Ներսիսյանին վերագրվող շուրջ 20 աշխատանքներ, որոնցից մեկը կենցաղային պատկեր է, իսկ մյուսները՝ դիմանկարներ: Վկայություններ կան, որ նկարիչը նաև պատմական և պատմամարտական բազմաֆիգուր մի քանի հորինվածքների հեղինակ է: Իր կենդանագրերում նա պատկերել է այնպիսի մարդկանց, ովքեր սեփական կյանքով և գործով են վաստակել «այժմեայս և ապագա սերնդոց սրտի ու մտքի մեջ» տպավորվելու իրավունքը: Դրանցից են ոչ միայն հայոց գրերի կերտողներ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը, այլև Ստ. Ներսիսյանի ժամանակակիցները՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցին, որի որդեգիրն էր նկարիչը, ռուսական բանակի հայազգի գեներալներ Բարսեղ Բեհբությանը, Մովսես Արղության-Երկայնաբազուկը, Արշակ Տեր-Ղուկասյանը, անվանի դերասանուհի Սոֆյա Մելիք-Նազարյանը և նրա ամուսինը՝ իրավաբան, հասարակական-մշակութային գործիչ Գրիգոր Իզմիրյանը, հրատարակիչ Համբարձում Էնֆիաճյանը և ուրիշներ: Երբեմն նկարիչը պատկերել է նաև մասնավոր անձանց՝ «Անհայտ ուսանողի դիմանկարը» («Երիտասարդը Լազարյան ճեմարանից», 1845), «Անհայտ կնոջ դիմանկարը» (1849), «Գ. Ակիմյանի դիմանկարը» և այլն: Այդ ստեղծագործությունների շարքում հանդիպում են ինչպես ակադեմիական կանոններով լուծված, խիստ պաշտոնական, հանդիսավոր կտավներ («Կաթողիկոս Ներսես Աշտարակեցու դիմանկարը», 1856, «Բարսեղ Բեհբությանի դիմանկարը», 1857), այնպես էլ հոգեբանական որոշակի խորությամբ օժտված կամերային աշխատանքներ՝ «Սոֆյա Մելիք-Նազարյանի դիմանկարը» (1865), «Գրիգոր Իզմիրյանի դիմանկարը» (1865) ևն: Փոքր-ինչ թախծոտ տրամադրությամբ, լուռ և ինքն-



ամփոփ խոհականությամբ է տոգորված Ստ. Ներսիսյանի լավագույն գործերից մեկը՝ «Գ. Ակիմյանի դիմանկարը»: Նկարչի ստեղծած կենդանագրերից աչքի են ընկնում նաև մեծահարուստ վաճառական Ավետիք Թամամշյանի և փաստաբան Մելիք-Ադամյանի դիմանկարները, որոնցում գեղարվեստական կերպարները սոցիալական սուր մեկնաբանություն են ստացել: Մեծ ժողովրդականություն են վայելել Ստ. Ներսիսյանի մեզ հայտնի վերջին յուղաներկ կտավները՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի մեծադիր դիմանկարները (1882):

Հայ նոր շրջանի կերպարվեստում կենցաղային ժանրի առաջին նմուշներից է Ստ. Ներսիսյանի «Խնջույք Քռի ափին» (անթվակիր) թեմատիկ պատկերը:

Թեպետ նկարչի կյանքը հիմնականում անցել է Թիֆլիսում, սակայն նրա կենսագրության մեջ կարևոր նշանակություն ունեն նաև Շուշիում ապրած տարիները, որոնց մասին եղած տեղեկությունները, ցավոք, սակավաթիվ են և բավականին հակասական: Այսպես, Երևանում 1927թ. լույս տեսած «Արվեստ» հանդեսում գեղանկարիչ Գ. Շարբաբչյանը պնդում է, որ Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիան ավարտելուց հետո և 1846-ին՝ Թիֆլիս մեկնելուց առաջ, Ստ. Ներսիսյանը որոշ ժամանակ ապրել է Շուշիում[1]: Հենվելով Գ. Շարբաբչյանի այս վկայության վրա, նույնն է կրկնում նաև Իզաբելլա Գինզբուրգը[2]: Սակայն արվեստաբան Մինաս Սարգսյանի հետագա պրպտումները ցույց տվեցին, որ նկարիչն առաջին անգամ Շուշի է եկել 1848-ին, իսկ 1857-1865 թթ.՝ շուրջ ութ տարի, ապրել և ստեղծագործել է այնտեղ[3]: Մեկ այլ հեղինակ՝ արվեստաբան Մանյա Ղազարյանը, իր հերթին նշում է, որ «...հավանաբար, Ստ. Ներսիսյանը հետագայում ևս (1870-

---

[1] Տե՛ս *Գ. Շարբաբչյան*, Ստեփանոս Ներսիսյան // Արվեստ, Ե., 1927, N 7–8, էջ 3–4:

[2] Տե՛ս *Гинзбург И.В.* Армянские художники первой половины XIX века // Պատմա-բանասիրական հանդես, 1958, N 3, էջ 126:

[3] *Ս. Սարգսյան*, Ստեփանոս Ներսիսյան, Ե., 1985, էջ 43-47:

ական թվականներին - Ա.Ա.) որոշ ժամանակով վերադարձել է Շուշի, քանի որ Կովկասի գլխավոր կառավարչի քաղաքացիական գործերի ֆոնդում պահպանվել է մի գրություն, որով խնդրում են պետական հարկից ազատել Շուշիում բնակվող Ստեփանոս Ներսիսյանին»[4]:

Ստ. Ներսիսյանի ստեղծագործության վաղ շրջանի լավագույն դիմանկարներից են ներկայումս Վրաստանի գեղարվեստի թանգարանում գտնվող «Լեռնցի» կամ «Տղամարդը ծխամորճով» բավականին մեծածավալ յուղաներկ պատկերը, ինչպես նաև զինվորական ու հասարակական ականավոր գործիչ, կաթողիկոս Հովսեփ Արղությանի եղբոր թոռան՝ 1829-ին Հայկական մարզի պետ նշանակված գեներալ Մովսես Արղության-Երկայնաբազուկի (1798-1855) յուղաներկ փոքրաչափ դիմանկարը՝ Հայաստանի ազգային պատկերասրահից, որոնք ստեղծվել են 1848 և 1849 թվականներին ու, այսպես թե այնպես, կապված են նկարչի՝ Շուշի կատարած առաջին կարճատև այցելության հետ:

Ծխամորճով տղամարդը պատկերված է լեռնային բնության գրկում նստած, գլուխը դեպի աջ շրջած: Ղարաբաղի մելիքների ազգային տարազին նմանվող նրա հագուստը, ուսին հենած հրացանը, գոտուն ամրացված թուրն ու ատրճանակը ներկայացնում են առնական դեմքով մի տղամարդու, որը, հավանաբար, ժամանակին ճանաչված ու հարգված, հեղինակավոր գործիչ է եղել: Այդ են հաստատում ոչ միայն նրա մելիքական հարուստ զգեստը, այլև խելացի հայացքը և ինքնավստահ, ազատ կեցվածքը:

Մովսես Արղության-Երկայնաբազուկի դիմանկարը նշանավոր զորավարին պատկերում է գեներալական արտահագուստով, գլխաբաց, կիսադեմով և գոտկատեղից: Սա եվրոպական և ռուսական կերպարվեստում վաղուց մշակված հան-

[4] *Մ. Ղազարյան*, Ստեփանոս Ներսիսյան // Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր: Հասարակական գիտություններ, 1962, N 1, էջ 40:



դիսավոր դիմանկարի տիպիկ օրինակ է, որտեղ սովորաբար առանձնակի ուշադրություն է դարձվում բարձրաստիճան զինվորականների կամ պաշտոնյաների կուրծքը զարդարող շքանշաններին ու մեդալներին, կերպասե ժապավեններին, ոսկեթել շքեղ ուսադիրներին: Բայց տվյալ դեպքում, այդ ամենի հետ մեկտեղ, նկարչին հաջողվել է լուծել ոչ միայն արտաքին նմանության խնդիրը, այլև անկաշկանդ դիրք տալ բնորդի ֆիգուրին, կերպարը օժտել հոգեբանական որոշ խորությամբ, արտահայտել Մ. Արղության-Երկայնաբազուկի բնավորության ու խառնվածքի հիմնական գծերը՝ վճռականությունն ու կամային ուժը:

Ամենայն հավանականությամբ, Ստ. Ներսիսյանը գեներալին հանդիպել ու նրա կենդանագրի վրա սկսել է աշխատել դեռ 1848-ին Շուշի քաղաքում, որն այդ ժամանակ գտնվում էր Մերձկասպյան երկրամասի զորքերի հրամանատար և քաղաքացիական նահանգապետ Մ. Արղության-Երկայնաբազուկի իշխանության տակ:

Ավելի շատ ու վստահելի տեղեկություններ ունենք նկարչի՝ Շուշի կատարած երկրորդ, առավել տևական այցելության մասին: Հայտնի է, որ 1857-ին Ստեփանոս Ներսիսյանը հրավիրվել է Ղարաբաղ, որպես Շուշվա հայոց թեմական դպրոցի նկարչության ուսուցիչ: Նա անմիջապես ընդունել է հրավերը և անհապաղ մեկնել Շուշի, քանի որ Թիֆլիսում անգործության էր մատնվել և ընկել նյութական ծանր կացության մեջ. հենց այդ տարիներին Ներսիսյան դպրոցի հոգաբարձական խորհուրդը նկարչին, ինչպես և նույն վարժարանում երկրաչափություն դասավանդող Գաբրիել Սունդուկյանին ազատել էր աշխատանքից՝ «պատճառաբանելով, որ այդ ուսուցիչների ավանդած առարկաները չեն համապատասխանում հոգևոր դպրոցի նպատակներին»[5]:

1857-ին Ստ. Ներսիսյանը գալիս է Շուշի, ուր հյուրընկ-

[5] Նույն տեղում, էջ 39:

կալվում է քաղաքի երևելի դեմքերից մեկի՝ Համբարձում աղա Հախումյանի տանը, որտեղ հաճախ հավաքվող մտավորականները՝ գրող Պերճ Պռոշյանը, մանկավարժ Պետրոս Շանշյանը, բանասեր Գարեգին Մուրադյանը (ապագա Մելիքսեդեկ արքեպիսկոպոսը) և ուրիշներ զրուցում էին հասարակական հրատապ խնդիրների, կրթական գործի, գրականության և արվեստի մասին: Այս միջավայրում է հայտնվում Ստ. Ներսիսյանը, և հենց այստեղ են ծագում քաղաքում հանրային ընթերցարան-գրադարան բացելու և տեղի թեմական դպրոցը վերակառուցելու, ուսումնական ծրագրերը և դասավանդման մեթոդները բարեփոխելու առաջադիմական գաղափարները:

Հավատալով, որ «ազգի երջանկության առավոտը ծագել ա և չպիտի մերը մտնի», Ստ.Ներսիսյանն այդ տարիներին հանդես է գալիս Թիֆլիսում լույս տեսնող «Կռունկ Հայոց աշխարհին» պարբերականում, որտեղ հրապարակված իր «բաց նամակում» շեշտում է ժողովրդի մեջ լուսավորական աշխատանք տանելու անհրաժեշտությունը, ներկայացնում Ղարաբաղի գավառում տեղի ունեցող մշակութային անցուդարձը[6]:

1858-ին Շուշիի գրասերների շրջանում միտք է հղանում Կ. Պոլսի օրինակով քաղաքում հիմնել «Թանգարան վերածնության» հանրային գրադարան-ընթերցարանը, որտեղ «ամենայն հարազատությամբ քարոզվում էին այն ժամանակվա մեր առաջավոր գործիչներ Նազարյանի, Նալբանդյանի, Շանշյանի գաղափարները»[7]: Առաջնահերթ խնդիր է դառնում երիտասարդ սերնդի ազգային դաստիարակության հարցը: Ստ. Ներսիսյանը խորապես համոզված էր, որ տեղում հայեցի կրթություն ստացած շնորհալի պատանիներն ու աղջիկները պետք է «գնան այնուհետև լուսավոր տերությունների համալսարաններումն ու արհեստանոցներումն ստանան բարձր գիտություններ և արհեստներ, որ վերադարձած իրանց հայրենիքն՝ լիցնեն և ամբարեն ամենայն մասամբ հայրենաց շտեմարաններն, ինչպես երբեմն մեր սուրբ նախնիքն էին Աթենքից վերադարձած»[8]:

Այդ ուղղությամբ հայ մշակութային գործիչների հետևողական քայլերը շուտով տալիս են իրենց առաջին պտուղները: 1860 թ. սեպտեմբերին Շուշիի թեմական դպրոցի ղեկավարությունը հանձնվում է հոգաբարձական խորհրդին, և այդպիսով եկեղեցին զրկվում է դպրոցական գործը տնօրինելու մենաշնորհից: Մշակվում և հաստատվում է դպրոցի նոր կանոնադրությունը, որի հիմնական նպատակն էր «պատրաստել գլխավորապես Հայաստանեաց եկեղեցւոյ արժանաւոր պաշտօնեաներ և առհասարակ հայոց հասարակութեան համար լուսաւորեալ և ուսեալ անդամներ»[9]:

Հետաքրքիր է, որ վեցամյա այդ դպրոցի ծրագրերում նկարչությանը բավականին մեծ տեղ էր հատկացված: Դրանում, ինչ խոսք, վճռական դեր է խաղացել Ստ. Ներսիսյանը: Ինչպես գրում է նրան ի մոտո ճանաչած Պ. Պռոշյանը, «Պետերբուրգի նկարչական ակադեմիան ավարտած հմուտ պատկերահան Ներսիսյանը այն անձնավորություններից էր, որ աշխատում էր գործել առանց իր եսը ցույց դնելու... Նրա բնորոշ հատկությունն էր... ժամանակակից պահանջներին հետևելը և լռությամբ յուր կարեաց չափ գործին նպաստելը... Այդ ուղղությամբ նա տարիներով գործակցում էր Ղարաբաղի դպրանոցի հառաջադիմության և հարատևության համար աշխատողների շարքում»[10]:

Ժողովրդին լուսավորելու, դպրոցական աղջիկների և կանանց գեղարվեստական ճաշակը զարգացնելու, նրանց գեղագիտական դաստիարակությանը նպաստելու տեսակետից նշանակալից էր Ստ. Ներսիսյանի նախաձեռնությամբ Շու-

[6] Տե՛ս «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1861, էջ 298–301:

[7] *Լեո*, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 247:



[8] Տե՛ս «Կռունկ Հայոց աշխարհին», էջ 298:

[9] *Լեո*, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, էջ 253:

[10] *Պ.Պռոշյան*, Մոռացված գերեզման // «Տարազ», Թիֆլիս, 1902, N 12, էջ 20–21:

շիում կազմակերպված ձեռագործության խմբակի աշխատանքը: Նկարիչն ակտիվորեն մասնակցել է նաև Շուշի քաղաքում 1864 թ. ապրիլի 7-ին օրիորդաց (Մարիամյան) դպրոցի հիմնադրմանը՝ կրթական մի օջախ, որի «նպատակն էր պատրաստել լուսավորյալ վարժապետներ և լուսավոր մայրեր»[11]:

Շուշիում անցկացրած տարիների ընթացքում հասարակական և մանկավարժական աշխատանքներով տարված Ստ. Ներսիսյանն ընդամենը մի քանի դիմանկարներ և եկեղեցական հատուկենտ պատկերներ է ստեղծել: Այդ առիթով Պ. Պռոշյանը գրել է. «Շատերը Ներսիսյանին դատապարտում էին իբրև ծույլ նկարչի, բայց նա անուշադիր էր գտնվում չհասկացողների բամբասանքներին... Նա նկարչությունից վեր էր համարում համեստ և օգտակար գործչի դերը»[12]:

1860-ական թթ. կեսերին Շուշվա մշակութային կյանքն աստիճանաբար կորցնում է իր նախկին թափը և առժամանակ լճանում: Ղարաբաղի դպրոցական վարչության անհեռատես քաղաքականության հետևանքով աշխատանքից ազատվում և քաղաքից հեռանում են գրող Պերճ Պռոշյանը, թեմական դպրոցի տնօրեն Պետրոս Շանշյանը, մշակութային այլ գործիչներ: Նրանց օրինակին է հետևում նաև Ստեփանոս Ներսիսյանը, որը նույնպես «ավելորդ համարեց մնալ Շուշիում և 1865-ին տեղափոխվեցավ Թիֆլիս»[13]:

Այնտեղ էլ նա վախճանվեց 1884-ին ծայրաստիճան աղքատության մեջ: Թաղված է Խոջիվանքի հայկական գերեզմանատանը՝ բարեկամների համեստ ծախսերով:

---

[11] *Լեո*, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, էջ 101:
[12] *Պ. Պռոշյան*, Մոռացված գերեզման..., էջ 21:
[13] Նույն տեղում: